Օ Ր Գ Ա Ն Ա Կ Ա Ն
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ինչպես դառնալ օրգանական մթերք արտադրող

Սույն ձեռնարկը հրատարակվել է Շեն ԲՀԿ գյուղատնտեսական խմբի և Ծիրանի այգի ՍՊԸ կողմից, ԵՄ և Ավստրիական զարգացման գործակալության ֆինանսական աջակցությամբ: Հրատարակության նպատակն է աջակցել ՀՀ-ում օրգանական գյուղատնտեսության զարգացմանը, նպաստել հայ ֆերմերի և սպառողի իրազեկվածության բարձրացմանը օրգանական արտադրության ու օրգանական սննդամթերքի վերաբերյալ:

This publication has been produced by Shen NGO and Tsirani Aygi LLC with the assistance of the European Union and the Austrian Development Agency. The content of this publication is the sole responsibility of the project Expansion of Organic Fruit Production Through Upgrading the Organic Orchard Management and Streamlining Horticulturist Farmers into Organic Agriculture Cooperative and can in no way be taken to reflect the views of the European Union and the Austrian Development Agency.

EUROPEAN UNION

oasi ORGANIC AGRICULTURE SUPPORT INITIATIVE

Շ Ե Ն

AUSTRIAN DEVELOPMENT COOPERATION

փաթեթի կազմման, աշխատանքների ճիշտ պլանավորման հարցում,

- կօգնի խմբային սերտիֆիկացիայի, ֆերմերների միավորման, ներքին վերահսկողության համակարգի ներդրման հարցերում,
- կմատուցի ընթացիկ խորհրդատվություն արտադրության կազմակերպման ընթացքում ծագած խնդիրների վերաբերյալ,
- կտրամադրի անհրաժեշտ տեղեկատվական նյութեր,
- կտրամադրի տեղեկատվություն օրգանական գյուղատնտեսության մեջ թույլատրվող բուժանյութերի, պարարտանյութերի և դրանց կիրառման ժամկետների վերաբերյալ,
- կմիջնորդի կապ հաստատելուն առևտրային կազմակերպությունների հետ և ներկայացնելու ֆերմերի օրգանական արտադրանքը,
- կիրազեկի համաշխարհային օրգանական արտադրության նորությունների և նորարարությունների մասին,
- կիրազեկի սպառողներին օրգանական մթերքի մասին:

1.

Ինչ է օրգանական գյուղատնտեսությունը

Ինտենսիվ գյուղատնտեսության զարգացմանը զուգընթաց զգալիորեն աճեցին պեստիցիդների և հանքային պարարտանյութերի կիրառության ծավալները գյուղմթերքի արտադրության մեջ: Արտադրողը միավոր մակերեսից սկսեց ստանալ ավելի առատ բերք, ավելի արդյունավետ պայքարել վնասատուների և հիվանդությունների դեմ, սակայն ընդամենը մի քանի տասնամյակ անց ի հայտ եկան պեստիցիդների և հանքային պարարտանյութերի պատճառած վնասները:

Քիմիկատների օգտագործումից վատացավ հողերի որակը, աղտոտվեցին օդը և ջրային ավազանները: Սրանք իրենց հերթին բացասաբար անդրադարձան կենդանի օրգանիզմների վրա, խախտվեց էկոհամակարգերի ներդաշնակությունը: Այս ամենը բնականաբար բերեց մաքուր, անվտանգ սննդի խիստ պահանջարկի:

Եվ զարմանալի չէր այն փաստը, որ ինտենսիվ գյուղատնտեսությանը զուգընթաց, վերջին մի քանի տասնամ-

յակների ընթացքում ծնվեց նոր ճյուղ՝ օրգանական գյուղատնտեսությունը:

Առաջին օրգանական տնտեսությունները Եվրոպայում հայտնվեցին անցյալ դարի առաջին կեսին, սակայն օրգանական գյուղատնտեսության գաղափարը շատ ավելի հին պատմություն ունի: Որպես ուղղություն այն սկսեց ձևավորվել և կայունանալ XX դարի վերջին:

Գոյություն ունեն «օրգանական գյուղատնտեսության» բազմաթիվ սահմանումներ, սակայն այդ բոլոր սահմանումների հիմնական էությունը մեկն է՝ գյուղմթերքի արտադրության տնտեսական շահավետությանը զուգընթաց ուշադրություն դարձնել բնության հիմնախնդիրներին:

Օրգանական գյուղատնտեսության նպատակը էկոլոգիապես մաքուր, բնական և մարդու օրգանիզմի համար անվտանգ գյուղատնտեսական արտադրանք ստանալն է՝ միաժամանակ ճիշտ օգտագործելով բնության ռեսուրսները՝ դրանք անընդհատ լրացնելու պարտադիր պայմանով:

Կարծիք կա, թե գյուղատնտեսության վարման այս եղանակը վերադարձ է մեր նախնիների ավանդական գյուղատնտեսությանը: Որոշ չափով դա այդպես է, սակայն օրգանական գյուղատնտեսություն վարում են գիտական, հետազոտական լուրջ աշխատանքների արդյունքների և գյուղտեխնիկայի օգտագործմամբ՝ միաժամանակ պահպանելով բնական հավասարակշռությունը:

Օրգանական գյուղատնտեսությունը, կարևորելով շրջակա միջավայրի պահպանությունը և էկոլոգիապես մաքուր սննդի ստացման գաղափարները, կարճ ժամանակահատվածում լայն տարածում գտավ աշխարհի տարբեր երկրներում:

Օրգանական գյուղատնտեսությունը որոշ չափով մտածելակերպ է, ապրելակերպ, հոգեվիճակ: Օրգանական մթերքի արտադրության, վերամշակման և սպառման արժեշղթայում այն յուրաքանչյուր մասնակցի հիմնավորված վարքագիծ է: Համապատասխանաբար.

- **Ֆերմերը** պետք է կարողանա բացի իր արտադրությունից տեսնել ու հասկանալ, թե ինչպիսի բուսական ու կենդանական աշխարհ է շրջապատում իր տնտեսությունը, իր գյուղատնտեսական գործունեությունը ինչպես է ազդում բնության վրա:
- **Վերամշակողը** պետք է գիտակցի, թե ինչպիսի հումք և ինչպիսի հավելումներ է օգտագործում վերամշակման գործընթացում՝ կարևորելով ոչ թե մթերքի պահպանման ժամկետը, այլ արտադրանքի անվնաս և առողջարար բաղադրությունը:
- **Սպառողը** պետք է գիտակցի, որ մարդու առողջության հիմնական գրավականը առողջ և մաքուր սնունդն է, իսկ ներկայումս սպառվող սննդամթերքի մեծ մասը դժվար է համարել առողջ և «էկոլոգիապես մաքուր». դրանք պարունակում են վտանգավոր քիմիական հավելումներ, ծանր մետաղներ, ԳՓՕ (գենետիկորեն փոխակերպված օրգանիզմներ) և այլն:

Օրգանական գյուղատնտեսության առավելությունները

- Օրգանական գյուղատնտեսությունը նվազեցնում է մարդու բացասական ազդեցությունը բնության վրա:
- Օրգանական գյուղատնտեսության մեջ հողը մշակության ընթացքում չի աղտոտվում հանքային պարարտանյութերով և պեստիցիդներով, արդյունքում հողում բնակվող կենդանի օրգանիզմները շարունակում են իրենց կենսագործունեությունը և պահպանում հողի բնական վիճակը:
- Օրգանական գյուղատնտեսությունը նպաստում է կենսաբազմազանության պահպանմանը:
- Օրգանական սննդամթերքը անվտանգ է մարդու առողջության և շրջակա միջավայրի համար, չի պարունակում նիտրատներ, ծանր մետաղներ, պեստիցիդների և այլ քիմիական հավելումների մնացորդներ:
- Օրգանական գյուղատնտեսությունը բարելավում է ընտանի կենդանիների առողջությունը, քանի որ կենդանիները պահվում են այնպիսի պայմաններում, որտեղ իրենց զգում են բնական վիճակում:
- Օրգանական գյուղատնտեսությունը եկամտաբեր է. օրգանական սննդամթերքն ավելի թանկ արժե, քան ավանդական մթերքը:

Ընտրեք բնականը՝ ՕՐԳԱՆԱԿԱՆԸ

Օրգանական գյուղատնտեսությունը հեռանկարային ուղղություն է

Հայաստանում կան լավ նախապայմաններ օրգանական գյուղատնտեսության զարգացման համար: Կան այնպիսի վայրեր, որտեղ արդեն երկար տարիներ է, ինչ չեն օգտագործում թունաքիմիկատներ և հանքային պարարտանյութեր, և հողը համեմատաբար աղտոտված չէ:

Շնորհիվ մեր բնակլիմայական պայմանների, Հայաստանում աճող պտուղ-բանջարեղենն օժտված է յուրահատուկ համային բարձր հատկանիշներով: Դրանք արտադրելով առանց թունանյութերի և հանքային պարարտանյութերի, կարող ենք մեր գյուղմթերքը միջազգային հանրությանը ներկայացնել նոր պիտակով՝ օրգանական մակնշմամբ:

Օրգանական մթերքի շուկայական արժեքը ավելի բարձր է սովորականից, որն էլ հավելյալ եկամտի ստացման երաշխիք է: Օրգանական արտադրությամբ կարող են զբաղվել թե՛ մեծ և թե՛ փոքր արտադրողները, քանի որ այստեղ մրցակցությունը ոչ թե քանակի, այլ որակի համար է:

Օրգանական գյուղատնտեսությունը հայ ֆերմերի համար կարող է դառնալ նոր, հեռանկարային և եկամտաբեր գործունեություն:

2.

Օրգանական գյուղատնտեսության կարևոր սկզբունքները

Օրգանական գյուղատնտեսությունն ունի պարտադիր պայմաններ, որոնց պետք է հետևի օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվող յուրաքանչյուր ֆերմեր: **Դրանք են.**

- արտադրությունը վարել ՄԻԱՅՆ օրգանական գյուղատնտեսության ստանդարտին համապատասխան,
- միայն սերտիֆիկացված արտադրանքը կարելի է անվանել ՕՐԳԱՆԱԿԱՆ,
- արտադրանքի ՃԻՇՏ մակնշում իրականացնել,
- գործել նախապես կազմված Օրգանական Կառավարման Պլանի սահմաններում,
- բոլոր նոր նախաձեռնությունների մասին նախապես տեղեկացնել սերտիֆիկացնող մարմին,
- կասկածելի, վիճելի հարցերը քննարկել միայն սերտիֆիկացնող մարմնի հետ,
- գրառումներ կատարել բոլոր գործողությունների վերաբերյալ,
- ապահովել տնտեսության մուտքերի և ելքերի թափանցիկ ընթացակարգ, ապահովել բոլոր գործընթացների հետագծելիությունը,
- տնտեսությունը հնարավորինս դարձնել ինքնաբավ, այսինքն՝ նվազագույնի հասցնել դրսից ներմուծում-

ները, անհրաժեշտ բոլոր նյութերն արտադրել կամ ստանալ տնտեսության ներսում, իսկ գոյացած թափոնները (սննդի մնացորդներ, թեփ, ծղոտ, թուղթ, չոր տերևներ) վերամշակել և վերաօգտագործել,

- շեշտը դնել բույսերի ու կենդանիների հիվանդությունների կանխարգելման, այլ ոչ թե բուժման վրա,
- բացառել ԳՓՕ-ների օգտագործումը,
- նախապատվությունը տալ տեղական սորտերին և ցեղերին:

Օրգանական գյուղատնտեսության մեջ արգելվում է

- թունաքիմիկատների օգտագործումը
- հանքային պարարտանյութերի օգտագործումը
- բացառվում է ԳՓՕ-ի օգտագործումը
- իոնացնող ճառագայթների կիրառությունը
- աճի խթանիչների և այլ քիմիական հավելումների օգտագործումը

3.

Օրգանական արտադրության սերտիֆիկացում

Օրգանական գյուղատնտեսության մեջ սերտիֆիկացումը խիստ կարևոր գործընթաց է, առանց որի արտադրողն իրավունք չունի այն վաճառել կամ ներկայացնել որպես օրգանական: Որպեսզի արտադրանքը հնարավոր լինի վաճառել կամ արտահանել որպես օրգանական, այն պարտադիր պետք է սերտիֆիկատ ունենա:

Սերտիֆիկատը թույլ է տալիս գնորդին, արտահանող կամ ներկրող պետությանը լիովին վստահ լինել, որ այդ մթերքը արտադրվել է օրգանական գյուղատնտեսության ստանդարտի պահանջները լիովին պահպանելով:

Սերտիֆիկատի նպատակն է.

- պաշտպանել սպառողին շուկայում առկա կեղծիքներից՝ ոչ օրգանական արտադրանքը որպես օրգանական ներկայացնելու դեպքում,
- հավաստիացնել, որ արտադրության բոլոր փուլերը, մակնշումը, պահեստավորումը, տեղափոխությունը համապատասխանում են օրգանական գյուղատնտեսության ստանդարտին,
- հավաստիացնել, որ տվյալ արտադրությունում սերտիֆիկացնող մարմնի կողմից կատարվել են ստուգայցեր և հսկվել են արտադրության բոլոր փուլերը:

Օրգանական գյուղատնտեսությունը վարվում է ըստ համապատասխան ստանդարտի՝ EU, USDA: Սերտիֆիկացնող մարմինը սկզբից մինչև վերջ ստուգում է արտադրության ողջ ընթացքը և ստանդարտի պայմանների բավարար կատարման դեպքում միայն տրամադրում սերտիֆիկատ:

Որոնք են սերտիֆիկացման ձևերը.

- **Անցումային փուլի սերտիֆիկատ** (անցումային փուլի տևողությունը կախված է արտադրության տեսակից. միամյա և երկամյա մշակաբույսերի դեպքում՝ 24 ամիս, բազմամյաների դեպքում՝ 36 ամիս):

Organic Agriculture Certification

Code GC/DM/CA-3.8.1

ՍԵՐՏԻՖԻԿԱՏ
օրգանական գյուղատնտեսական արտադրության (A)

- **Օրգանական սերտիֆիկատ** (կարող են ստանալ միայն այն տնտեսությունները, որոնք բարեհաջող ավարտել են անցումային շրջանը):

Յուրաքանչյուր արտադրող սերտիֆիկացվում է ամեն տարի և յուրաքանչյուր տարվա արտադրանքի համար ստանում է նոր սերտիֆիկատ: Սերտիֆիկացման ծառայությունը վճարովի է:

Սերտիֆիկացման գործընթացը սկսվում է այն պահից, երբ ֆերմերը դիմում է սերտիֆիկացնող մարմին և ցանկություն է հայտնում զբաղվել օրգանական գյուղատնտեսությամբ:

Սերտիֆիկատը օրգանական արտադրանքի ԱՆՁՆԱԳԻՐՆ Է

Օրգանական մթերքի վրա կա սերտիֆիկացնող մարմնի տարբերանշանը: Ստորև ներկայացված են մի քանի մակնշման օրինակներ:

Սերտիֆիկացման գործընթաց բաղկացած է հետևյալ քայլերից.

- դիմում սերտիֆիկացնող մարմին,
- հայտի լրացում,
- արտադրական միավորի նկարագրություն,
- տնտեսության կառավարման պլանի կազմում,
- հողի սեփականությունը հաստատող փաստաթղթերի ներկայացում,
- տնտեսության քարտեզի կազմում,
- անհրաժեշտության դեպքում լրացուցիչ տեղեկատվություն,
- պայմանագրի կնքում հայտատուի և սերտիֆիկացնող մարմնի միջև,
- պարտադիր տարեկան ստուգայց,
- ոչ պլանային ստուգայց:

Կարելի է դիմել ինչպես անհատական սերտիֆիկացման, նույնպես և խմբային սերտիֆիկացման համար: Խմբային սերտիֆիկացումը հնարավորություն է տալիս փոքր արատադրողներին միավորվել խմբի մեջ և ստանալ սերտիֆիկատ:



Բերված սխեմայում պատկերված են անհատական և խմբային սերտիֆիկացիայի գործընթացները: Նշենք, որ

Անհատական սերտիֆիկացման դեպքում սերտիֆիկատի սեփականատերը ֆերմերն է:

Խմբային սերտիֆիկատի դեպքում սերտիֆիկատի սեփականատերը խումբն է:

Օրգանական արտադրության մեկնարկը տրված է

RGANIC
ОРГАНИКА
Органический мед
ARMENIA
ORGANIC
PRODUCTS
ОРГАНИЧЕСКИЕ ПРОДУКТЫ АРМЕНИИ

4.

Ինչպես դառնալ օրգանական մթերք արտադրող

Օրգանական գյուղատնտեսությունը էականորեն տարբերվում է ինտենսիվ գյուղատնտեսությունից: Օրգանական արտադրության անցնելու համար ֆերմերին անհրաժեշտ են որոշակի գիտելիքներ: Սակայն կան մի քանի գործոններ, որոնք անկախ ֆերմերի կամքից կարող են արգելք հանդիսանալ օրգանական արտադրություն սկսելու համար: Այդպիսի գործոնները կարելի է բաժանել երկու խմբի.

Անձնային գործոններն են՝

- ֆերմերի/արտադրողի սխալ մտածելակերպը,
- օրգանական արտադրության գաղափարի սխալ ընկալումը,
- ֆերմերի պատասխանատվության զգացումի բացակայությունը:

Արտաքին գործոններն են՝

- տնտեսության՝ արդյունաբերական գործարանների մոտ տեղակայվածությունը,
- տնտեսության հողի խիստ աղտոտվածությունը,
- տնտեսությունում օգտագործվող ոռոգման ջրի աղտոտվածությունը,
- տնտեսության/հողակտորի տեղակայվածությունը ինտենսիվ մշակվող գոտում,
- բնակլիմայական պայմանները:

Օրգանական արտադրողի պարտականությունները

- **Ուսանել** օրգանական ստանդարտները. դրանք մանրամասնորեն նկարագրում են, թե արտադրական որ փուլի համար որ գործառույթներն են թույլատրելի, իսկ որոնք՝ ոչ:
- **Գրանցումներ**. հարկավոր է վարել մանրամասն գրանցումների մատյան առօրյա բոլոր գործողությունների վերաբերյալ: Արտադրական բոլոր փուլերը պետք է մատյաններ ունենան: Պետք է ովորեցնել և հետևել, որ պատասխանատու անձնակազմը բոլոր գրանցումները ժամանակին կատարի: Գրանցումները մշտապես պետք է հասանելի լինեն տեսուչների համար:
- **Պլանավորում**. հարկավոր է պլանավորել յուրաքանչյուր արտադրական տարին և/կամ տնտեսության գործունեությունը, նախապես համաձայնեցնելով սերտիֆիկացնող մարմնի հետ:
- **Փաստաթղթավորում**. պահանջվում է վարել մանրամասն փաստաթղթավորում արտադրական բոլոր գործառույթների վերաբերյալ (առք ու վաճառքի փաստաթղթեր, ներմուծումներ/արտահանումներ):
- **Տարեկան վճար**. տարեկան սերտիֆիկացման և տեսչական այցի ծառայությունների դիմաց կատարել վճարում:

Տնտեսությունը Օրգանական ստանդարտներին համապատասխան վարելու համար կարիք չկա փոխել մշակության ամբողջ համակարգը, ուղղակի պետք է բացառել բոլոր արգելվող գործառույթները և ներառել անհրաժեշտ ու օգտակար նոր միջոցառումներ: Տնտեսությունը օրգանական եղանակով վարելու համար պետք է հետևել ստորև ներկայացված կարևոր պահանջներին.

- իրականացնել հողի ճիշտ ագրոտեխնիկական մշակություն, բացառելով հողի էրոզիայի պատճառ հանդիսացող միջոցառումները,
- առավելությունը տալ տեղական, հիվանդություններիի և վնասատուների նկատմամբ դիմացկուն սորտերին և տեսակներին,
- պարտադիր կիրառել Ցանքաշրջանառություն,
- Իրականացնել ճիշտ պարարտացում (գոմաղբ, կենսահումուս, կոմպոստ, թռչնաղբ, տորֆ, փայտի մոխիր, թույլատրելի ապարներ),
- իրականացնել պրոֆիլակտիկ պայքար հիվանդությունների և վնասատուների դեմ (մեխանիկական, կենսաբանական, պայքար թույլատրելի բուժանյութերով, թուրմերով),
- կատարել կանոնակարգված ոռոգում, բացառելով հողի լվացման պատճառները,
- բացառել մոլախոտերի դեմ պայքարի քիմիական բոլոր եղանակները:

5.

Օրգանական գյուղատնտեսության խորհրդատվություն

Շեն-ի նպատակն է աջակցել ՀՀ-ում օրգանական գյուղատնտեսության ներդրմանն ու զարգացմանը՝ մասնագիտական գիտելիքներ տրամադրելով օրգանական արտադրությամբ զբաղվող անձանց և տնտեսություններին:

2005 թ. առաջին անգամ Հայաստանում «Շեն» ԲՀԿ-ի կողմից ստեղծվել է օրգանական գյուղատնտեսության խորհրդատվական ծառայություն, որը գործում է մինչև օրս: Այն անվճար խորհրդատվություն է մատուցում ֆերմերներին օրգանական գյուղատնտեսության հիմնական հարցերի, օրգանական ստանդարտների վերաբերյալ, օգնում՝ սերտիֆիկացման դիմելու գործընթացում:

2016 թ.-ից գործում է նաև «**Ակունքի օրգանական փորձացուցադրական ուսումնական կենտրոնը**», որտեղ «Շեն» ԲՀԿ խորհրդատուները անվճար մասնագիտական խորհրդատվություն են տրամադրում բուսաբուծական, անասնապահական ճյուղերի, ինչպես նաև մեղվաբուծության, մթերքի վերամշակման, վայրի հավաքի, չորացման արտադրական ճյուղերի զարգացման ուղղություններով:

Բոլոր դասընթացները անցնում են «Շեն» ԲՀԿ խորհրդատվական խմբի և հրավիրված մասնագետների մասնակցությամբ: Յուրաքանչյուր ամիս իրականացվում է առնվազն 4 սեմինար: Սեմինարների օրերը տեղադրվում են Շեն-ի կայքում՝ www.shen.am, մասնակցությունն անվճար է:

Խորհրդատուները անհատական մոտեցում են ցուցաբերում յուրաքանչյուր տնտեսությանը, ֆերմերին, վերամշակողին: Ավանդականից օրգանական գյուղատնտեսության անցումը ավելի դյուրին դարձնելու համար խորհուրդ է տրվում դիմել «**Ակունքի օրգանական փորձացուցադրական ուսումնական կենտրոն**», որտեղ խորհրդատվական խումբը

- կգնահատի տնտեսության պոտենցիալ հնարավորությունները, ռիսկերը օրգանական արտադրության վարման համար,
- կպարզաբանի օրգանական գյուղատնտեսության վարման հիմնական մեթոդները,
- կաջակցի ֆերմերներին և ֆերմերային խմբերին՝ հավաստագրման գործընթացի ներկայացման և պարզաբանման հարցերում,
- կաջակցի տնտեսության վարման փաստաթղթերի